CA 32-1/37
MAR 2010

Ա. ՍԽՀ. ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ

Պրոլետարներ բոլոր յերկրների միացեք։

ԾՐԱԳԻՐ

(Լիկկայանների) յեվ հասակավորների սկզբնական հանրակրթական դպրոցների պոլիտեխնիկական մինիմումի

(Գյուղ և քաղաք)

Հաստատված և Լուսժողկոմատի ուսումնամեթոդական սեկտորի կողմից։

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

371.4
Ծ-89

Բաղու, 1931—32 ուս. տարի։

371.4
Ծ-89

I. ԾՐԱԳԻՐ

Պոլիտեխնիկական մինիմումի լիկկայանների յեվ հասակավորների սկզբնական հանրակրթական դպրոցի համար

(արտադրության հետ ծանոթացնելու ներածական դասընթաց)

1. Ձեռնարկությունը որպես սոցիալական որգանիզմ։ Կապիտալիստական և սոցիալիստական ձեռնարկությունները և դրանց տարբերությունները։ Ձեռնարկությունը որպես տնտեսական ամբողջություն. նրա խնդիրները, պրոդուկցիան, հիմնական ցեխերը (բաժինները) և դրանց կապն իրար հետ։

2. Հումք։ Տվյալ արտադրության մեջ գործադրելիք (մշակվող կամ վերամշակվող) հիմնական նյութերը։ Դրանց ստանալու (արտադրելու) տեղն ու միջոցները և նախնական մշակումը։ Նյութերի ֆիզիկական կազմությունը և առանձնահատկությունները։ Նյութերի մշակման հիմնական սկզբունքները և վերջնական պրոդուկտի ստացումը։

3. Մեխանիկա։ Ամեն մի աշխատավոր մեխանիզմի հիմնական հատկությունները։ Աշխատող ուժի ընդունարանը (կոթը, շկիվը)։ Ծաղրդող մասը (ատամնավոր անիվները—ճախարակները, առանցքը)։ Աշխատող մասը (դանակը, կարիչը, պեդանտոնը և այլն)։ Դազդյահը (ատամնին)։ Մեխանիզմի աշխատանքի հիմնական տեսակները՝ կորել, ճնշել (սեղմել) ամրացնել, գամել, ձգել, վոլորել, մանել, կապել, հյուսել և այլն։ Մեխանիկական հաղորդման տեսակները՝ ճկուն միացում (գոտիներ, պարան, շղթաների կապ), անմիջական միացում (մուֆտաներ—կոշտ և եղատիկ)։ Ատամնավոր հաղորդում (ատամնավոր անիվներ, արագության տուփեր)։ Պտուտային շարժման փոխվելը առաջնագաց շարման և ընդհակառակը (ատամնավոր անիվը ձողի հետ, շեղասեպ (կրիվոշիպ), եքսցենտրիկ և այլն)։ Չափումները և ստուգիչ-չափական գործիքները։

Ծանոթություն. Տրվում են միայն պանդան մեխանիզմների նկարագրությունները—առանց հաշվումների (расчет) և գծագրերի։

4. Եներգիտիկա։ Շարժման աղբյուրները և շարժիչ-մեքենաները։ Կենդանական որգանիզմը. Մկանային եներգիայի ծագման և պահպանման համար անհրաժեշտ ֆիզիկական նախադրյալները։ Մարդը։ Ուժի լծման տեղը՝ կոթը, պարանը (բլոկներում—ճախարակներում), վոտի սղմիչ (պեդալ) և այլն։

Ձիու ուժը։ Ընտանի կենդանիների ուժի կիրառումը (ձիու, յեզան, գոմշի և այլն) վորպես եներգիայի աղբյուր։ Ձիու ուժը շարժիչների նկատմամբ, վորպես պայմանական ուժաչափ միավոր, վորը հավասար է 75 կիլոգրամմ-մետրի։

Բնության մեխանիկական ուժերը՝ քամի (հողմաշարժիչ), ջուր (ջրաշարժ անիվ, տուրբին).

Ջերմություն։ Գոլորշի—շոգի (շոգեշարժներ, շոգետուրբիններ)։ Այրվող նյութերի բռնկումն (այրումը) և պայթումը (ներքին այրման շարժիչներ—ավտո, մոտոր)։

Ելեքտրականություն։ Ելեքտրոկայաններ, ելեքտրոմոտորներ, կենտ և խմբական հաղորդումներ (պրիվոդ)։

Ծանոթություն։ Սկսվում է միայն նկարագիրը տեսականորեն։

5. Արտադրության կազմակերպումը։ Ձեռքի և մեխանիքական աշխատանք. մեխանիքականի առավելությունները։ Միատեսակ իրերի մասսայական արտադրումը (պատրաստումը)։ Բանվորական ուժի բաժանումը, բաշխումը, հաշվեառը, նորմիրովկան և կապակցումը։ Աշխատավարձը և աշխատանքի գնահատման սկզբունքները։

6. Տվյալ ձեռնարկության կազմակերպման աշխարհագրական և այլ պայմանները։ Ձեռարկության տեղը տվյալ արդյունաբերական ճյուղի մեջ։ Ձեռնարկների կազմակերպման հիմունքները և արդֆինպլանը (ձեռնարկության ու նրա ցեխերի)։ Տվյալ ձեռնարկությունը—ժողովրդական տնտեսության ընդհանուր պլանի մեջ. նրա դերը, կապը մյուս տեսակների հետ։ Արդյունաբերության յեվ գյուղական տնտեսության հիմնական տեսակները։ Հնգամյակը. նրա խնդիրները, կառուցման սկզբունքները, յերկու աշխարհների կռիվը (սոցիալիզմի և կապիտալիզմի)։ Սոցիալիստական շինարարության մեթոդները (սոցմրցում և հարվածայնություն)։

7. Բանվորը սոցիալիստական ձեռնարկության մեջ, նրա խնդիրները, պարտականությունները, իրավունքը։ Հասարակական կազմակերպությունների և պրոֆեսիոնական միությունի դերը սոցիալիստական ձեռնարկություններում (կու-

48.892

15 MAY 2013

սակցական և կոմյերիտական բջիջներ, պրոֆբջիջ, թերթերի շրջիկ բրիգադներ ու խմբագր. և պոստեր)։ Դեպի սոցիալիզմ և կոմունիզմ տանող ճանապարհը։

II. ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ

Ա. ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանվորական դպրոցի ծրագրի և ուսման պոլիտեխնիքական մինիմումով հագեցնելու մասին։

1. Արդեն վաղուց հասունացել է բանվորական դպրոցի և առհասարակ հասակավորների դպրոցի պոլիտեխնիկացման կարիքը, վորովհետև անգրագիտության և կիսագրագիտության լրիվ վերացումը դնացել է, ավելի շուտ՝ տարվել է մեր ծավալվող ու զարգացող սոցիալիստական տնտեսությունից բոլորովին անջատ ու կտրված։ Այստեղից էլ ստացվել են՝ ցրումն, ռեցիդիվը և բանվորների ու աշխատավոր դժգոհությունները միակողմանի ուսումից, չնայած այն հանդամանքին, վոր վերջին տարիներում ուսման մեջ հասարակական-քաղաքական ճյուղը բռնում եր իրեն պատկանելիք տեղը։ Ցեվ հասկանալի է, վորովհետև ուսման մեջ գործնականը, կապի կոնկրետ լինելը արդյունաբերության ու գյուղատնտեսության ճյուղերի հետ իրենց նոր ձևերի ու նոր տեխնիկայի հետ միասին այնպիսի ֆակտորներ են հանդիսանում, վորոնք յուրաքանչյուր սովորողին դրդում են դեպի ուսում—դեպի արտադրական և հասարակական-քաղաքական ուսում։

Պոլիտեխնիքական ուսուցումը—այդ այն է. վորը պահանջում են թե ժողովրդական տնտեսության ֆակտորների և՛ թե մեր սոցիալիստական յերկրի քաղաքական ձգտումների ու նվաճումների ընդհանուր հզոր աճումն ու զարգացումը։ Իսկ այդ աճումն ու զարգացումը համապատասխան պահանջ են առաջադրում յուրաքանչյուր սովորողին, մանավանդ հասակավոր սովորողին։

2. Առաջադրելիք ներկա „Պոլիտեխնիքական գիտելիքների և ունակությունների մինիմումը բանվորական դպրոցում“ ընդգրկում է բանվորական կրթության ամբողջ սկզբնական սիստեմը, սկսած լիկկայանից և վերջացնելով կիսագրագիտական խմբակներով ու բանվորական կրթության կոմբինատով, հավասարապես ընդգրկելով նաև սիստեմատիկ բնակչություն կրթող սկզբնական հանրակրթական դպրոցները։

58367-67

ՀՍՍՌ-Արմ ՍՍՌ
Ս. ԿՄ. Ա. Մեսրոպյան
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ՍԵՓԱԿԱՆ

3. Գրագիտության տարբեր մակարդակները, դրա հետ նաև տարբեր հնարավորությունները, վոր ունին սովորողները, վորոշում են տարբեր խմբերին համապատասխանող պոլիտեխնիքական գիտելիքների և ունակությունների տարբեր ծավալը։

4. Ներկա ծրագրային մինիմումը բոլոր խմբերի համար մնում է ամբողջական ու ամփոփ, վորովհետև անկարելի է նրան բաժանել, վոր բանվորական կրթության սիստեմի վորոշ ողակը (դիցուք թե լիկկայանը կամ կիսագրագիտական խմբակը) անցնի ծրագրի այս կամ այն մասը։ Այստեղ, տվյալ ծրագրի համաձայն, նյութերը պետք է դասավորված լինին կոնցենտրներով (համակենտրոններ), համաձայն ընդհանուր ծրագրի բաժինների ու թեմաների ծավալի, բայց պահպանելով պոլիտեխնիքական մինիմումի ծրագրի առաջադրած հիմնական բնույթագծերը (խարակտերիստիկաները)։

5. Համարում ենք, վոր մատնանշած մինիմումն իր ամբողջ ծավալով կիրառելի է միայն բանվորական դպրոցի III տարում. հետևապես առաջին 2 աստիճաններում կարևոր է կոնցենտրները տալ ավելի սեղմ՝ ձևով, որինակ հետևյալ ծավալով.

ա) Բաժին I—մշակման յենթարկել բոլոր աստիճաններում լրիվ ծավալով.

բ) Բաժին II—պետք է բաժանել 3 մասերի՝ 1) լիկկայաններին բավական է տալ միայն հիմնական հասկացողություններ մետաղների և մատերիալների մասին, նրանց ստացման տեղն ու ձևերը, սկզբնական մշակումը և այդ մշակման հիմնական սկզբունքները, նաև վերջնական պրոդուկտի ստացումը։ 2) Կիսագրագիտական դպրոցում անհրաժեշտ է դրանց ավելացնել մատերիալների ֆիզիքական կազմը և առանձնահատկությունները (համառոտագույն տեխնոլոգիական գիտելիքներ)։

գ) Բաժին III—պետք է մշակվի ամբողջապես բոլոր ողակներում—միայն այն տարբերությամբ, վոր ցածր ողակներում (լիկկայան, կիսագրագիտական դպրոց) տրվում է զուտ զանազան մեխանիզմների նկարագիրը, իսկ բարձր ողակում մբացնվում են նաև հաշվումների ելեմենտներն ու ֆիզիքական վորոշ որենքներ և այլն։

դ) Բաժին IV—մշակվում է նույնպիսի բնույթագծերով, ինչպես III բաժինը։

յե) Բաժին V—նույն բնույթագծերով, ինչ վոր III բաժնում, սահմանափակվելով այնպիսի հարցերի մշակումով, ինչ-

պես՝ „Աշխատանք ձեռքի և աշխատանք մեխանիկական. վերջինիս առավելությունները»։ „Միատիպ իրերի մասսայական արտադրումը“։ „Աշխատանքի ռացիոնալիզացիա“, «Բանվորական ուժի կապակցումը, նորմայացումը, բաշխումն ու հաշվառումը։ Աշխատավարձ, աշխատանքի վարձատրման սկզբունքները“։

գ) Բաժին VI—ամբողջությամբ մշակվում է բոլոր ոլորտներում։ Տարբերությունը բացառապես մշակման խորացման մեջն է՝ ցածր աստիճաններում տրվում են միայն ընդհանուր հասկացողություններ, որոնք հետագայում խորացվում են։

ե) Բաժին VII—ինչպես և VI բաժինը—մշակվում է ամբողջությամբ բոլոր ոլորտներում։

Մատերիալի կոնկրետացումը, պարզումը (նկարագրական կողմի) և ցուցականի կիրառումը պետք է ծառայեն մշակման մեթոդների համար որպես հիմնական սկզբունքներ։

Բ. ՆՅՈՒԹԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ և ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ

1. „Պոլիտեխնիքական մինիմումի“ նյութերի մի շարք մոմենտները պետք է մշակել ոչ թե հատուկ զբաղմունքների ժամանակ, այլ ընդհանուր ծրագրի բաժինների թեմաներում և քաղաքի նյութի հետ միասին, հագեցնելով վերջիններս պոլիտեխնիքական տեղեկություններով։

2. Առհասարակ ամեն մի նյութի մշակումը հասակավորների հետ պետք է տարվի ակտիվ մեթոդներով։ Պոլիտեխնիքական գիտելիքների և ունակությունների մշակումն առավել ևս պիտի տարվի աուդիտորիայի առավելագույն ակտիվության հիման վրա, հաշվի առնելով սովորողների փորձառությունը և ձեռք բերած ունակությունները։ Պոլիտեխնիզմը կիրառվում է դպրոցական աշխատանքի բոլոր տեսակների միջոցով, մանավանդ սովորողների հասարակական-քաղաքական աշխատանքի միջոցով։ Այդ հանգամանքը ևս ոչ պակաս քաղաքական նշանակություն ունի։

3. Պոլիտեխնիքական մինիմումի բաշխման ու դասավորման նկատմամբ, նրա կապակցելու և մշակելու իմաստով, կմատնանշենք, որինակ, հետևյալը։

I. „Ձեռնարկությունը, որպես սոցիալական որգանիզմ“ բաժինը կարելի չէ մշակել քաղաքի, հասարակագիտության և ընդհանուր կոմպլեքսի հետ միացրած, կապակցելով՝ „Կատարելով արդիֆինպլանը—կատարենք հնգամյակը“ թեմայի հետ։ Դրա մշակման համար կպահանջվի 2-3 լրացուցիչ զբաղմունք։

Մշակման մեթոդը։ Սոցիալիստական և կապիտալիստական ձեռնարկությունների տարբերությունների մասին խոսելուց և հետևություններ հանելուց հետո կազմակերպվում է եքսկուրսիա մոտակա ձեռնարկությունն ուսումնասիրելու համար։ Այնտեղ սովորողներին հնարավորություն է տրվում (նախորոք մշակման պլանով) ըմբռնել „ձեռնարկությունը որպես սոցիալական որգանիզմ և տնտեսական ամբողջություն“ գաղափարը, նրա նշանակությունը, պրոդուկցիան և այլն։ Թեմայի մշակումը վերջացնում են գեղարվեստական հոդվածի կամ հատվածի ընթերցումով—կապիտալիստական և սոցիալիստական տնտեսությունների տարբերության մասին, մանավանդ որ մեր յերկրում ամբողջովին վերացված են կապիտալիստական ձեռնարկությունները, իսկ պատկերավոր հատվածը այստեղ մեզ ոգնում է կատարյալ գաղափար տալու գործում։ Միաժամանակ կարևոր է կատարել գրանցումներ, քաղվածքներ (աշխատանքի տեսարերում—2-րդ և 3 տարին սովորողների մասին է խոսքը)։

II Հումուլյթ։ Այս բաժնի նյութերը պետք է մշակել սովորողների հետ իսկական հումքի ուսումնասիրությամբ (տեղում), այն հումքի, որը գործադրվում է տվյալ ձեռնարկության մեջ։

Ուսումնասիրության նյութի ընտրությունը կատարվում է սովորողների կազմին համապատասխան. մեքենագործների խմբակը պետք է ավելի խորը ծանոթանա իրեն մասնաճյուղին (մետաղներ) վերաբերող նյութերի ստացման, նախնական մշակման պրոցեսների հետ „Մեր բնական հարստությունները“ կամ այլ նման թեմա մշակելու ընթացքում։

Տեքստիլշիկների աուդիտորիան նույնպիսի կարգով ուսումնասիրում է թելաբեր նյութերի (բույսերի) մշակման ու վերամշակման հետ. Դրա համար ավելորդ չի լինի զբաղմունքների հիմնական քանակին ավելացնել նաև 1-2 լրացուցիչ զբաղմունք—ընդլիտություն անցնելու։ Եքսկուրսիաները (կոլեկտիվ կերպով կազմած պլանով)՝ ֆաբրիկային կամ գործարանային մշակմանը ծանոթանալու նպատակով անհրաժեշտ են։

Այդպես պետք է սովորեցնել նաև բանվորական այլ մասնագիտություն ունեցող խմբերը։ Սակայն այդ դեռ չի նշանա-

կում, թե մի մասնագիտություն ունեցող բանվորների հետ չպիտի մշակել մեր միասնական տնտեսության մյուս տեսակները։ Ամբողջ եյությունը կայանում է նրանում, որ տվյալ աուդիտորիան (սովորողների խումբը), ծանոթանալով մեր տնտեսության բոլոր ճյուղերի հետ, «յուր» ճյուղը ավելի խոր է ուսումնասիրում։

Մշակման մեթոդները չեն փոխվում (ակտիվության բարձրագույն աստիճանի իմաստով)։ Մշակվող հումքի հետ սովորողները ծանոթ են պրակտիկայից։ Սակայն կգտնվեն նաև այնպիսիները, որոնք անծանոթ են։ Ուստի անհրաժեշտ է „Հումքի" բաժնի մշակման ժամանակ չբավականանալ բանավոր նկարագրություններով։ Մշակման և վերամշակման սկզբունքների հետ հարկավոր է ծանոթացնել նաև արտադրության մեջ։ Զրույցը պետք է կառուցել սովորողների ամենաբարձր ակտիվության հիման վրա, յեթե նրանց մեծամասնությունը լավ գիտի „յուր" հումքը։ Մշակման հետևանքով պետք է ստացվի գիտելիքների խորացում ու սիստեմի վերացում։ Գրանցումները և քաղվածքները հանձնարարելի յեն։

III Մեխանիկա։ Ամեն մի աշխատող մեխանիզմի հիմնական հատկություններն ու վորակը և այլն պետք է մշակվեն հատուկ զբաղմունքների ընթացքում, ինժեներա-տեխնիքական ուժերի կամ վորակավոր բանվորների (ծայրահեղ դեպքում) անմիջական ղեկավարության տակ։

Մշակման մեթոդները։ Անհրաժեշտ է աշխատող մեխանիզմի հիմնական մասերի և, գլխավորապես, շարժման սկզբունքների հետ սովորողներին ծանոթացնել անմիջականորեն, հենց մեխանիզմների վրա (ավելի լավ է աշխատանքի ժամանակ)։ Մշակման վերջը պետք է սովորողներն իրենց գործնական փորձը կանոնավորեն ու վորոշ սիստեմի վերածեն։

IV Եներգետիկա։ Այստեղ հարկավոր է ծանոթացնել եներգիայի հետևյալ տեսակների հետ. 1) մարդկային որգանիզմի ուժի հետ. 2) կենդանական որգանիզմի ուժի հետ, (ձիու, յեզան, գոմեշի), 3) բնական մեխանիկ ուժերի հետ (քամու, ջրի) և 4) ելեքտրականության, վորպես բնական մի հատուկ ուժի հետ։ Մարդու և կենդանիների մասին անցնում են բնագիտական հատուկ դասերի միջոցով։ Նույն միջոցով սովորում են նաև մթնոլորտի մասին, մշակելու „քամով և ջրի մեխանիկ ուժերը" թեման (հողմաշարժիչներ և ջրաշարժիչներ), ուր ծանոթանում են ոդի հոսանքի և ընկնող ու հոսող ջրի

առաջացրած ձրի ուժին, վորի ոգտագործումը մի մեծ ենթադրելիկ բազա յե մեր տնտեսության հետագա զարգացման համար։ Ելեքտրականությունն ուսումնասիրելուն պետք է հատկացնել մի քանի ավելորդ զբաղմունքներ, համապատասխան տեսական և պրակտիկ մեթոդներով։

Մշակման մեթոդները։—Եներգիայի տարբեր տեսակների հետ ծանոթացումը պետք է կատարվի տեսականի և պրակտիկայի հիման վրա։ Աշխատանքի ու դիտողության կապը ռեալ ոբյեկտի հետ չպետք է զանց առնել։ Մշակման արդյունքը պետք է ամրապնդել և ընդհանրացնել պրակտիկորեն, առանց սխալների։ Հատկապես կարևոր է յուրացնել ելեքտրական եներգիայի ստացման և աղբյուրների տարբեր տեսակները։ Դրա համար անհրաժեշտ է եքսկուրսիա կազմակերպել դեպի ելեքտրոկայան, ռադիոկայան, հեռախոսակենտրոն և այլն։

V. „Արտադրության կազմակերպումը"—Մշակվում է հատուկ զբաղմունքների ընթացքում, պարտադիր կերպով ուսումնասիրելով պլանավորումը, սոցմրցումը, հարվածայնությունը, ցեխերի կազմակերպումը—վորևե մի մոտակա ձեռնարկության ոեջ։

Մշակման մեթոդները։ Այս բաժնի մշակումը պետք է սկսել սովորողների արտահայտություններից, որինակ, հետևյալ հարցերի շուրջը՝

1) Ի՞նչպես է բաշխած աշխատանքը ցեխում։

2) Բանվորի, վարպետի, տեխնիքական ղեկավարի դերը ինչո՞ւմն է կայանում։

3) Ի՞նչպիսի աշխատանքի բաշխումը տեղի ունի աշխատանքային պրոցեսի ժամանակ (կոնվեյեր, անընդհատ հոսանք)։

4) Ի՞նչպես են դրված աշխատանքի դիսցիպլինան, սոցմրցումը, հարվածայնությունը և այլն։

Սովորողների արտահայտվելուց հետո ղեկավարը ամփոփում և ընդհանրացնում է ձեռքի տակ ունեցած տեղեկություններն ու նյութերը—սիստեմի յե վերածում։

Ճիշտ այդպիսի յեղանակով ու ձևով կարելի յե մշակել հետևյալ մոմենտները՝ աշխատանքի մեխանիզացիան, ստանդարտիզացիան, ռացիոնալիզացիան, պլանավորումը, նորմայացումը, բանվորական ուժի բաշխումը և այլն։

VI. Աշխարհագրական և այլ պայմանները վորոնք պայմանավորում են տվյալ ձեռնարկության կազմակեր-

պումը, պետք է մշակվեն ու յուրացվեն տնտեսական աշխարհագրության համառոտ ու պարզ հասուկ դասերի միջոցով։

Հնգամյակի իրականացման խնդիրը, քաղաքի և գյուղի կապը անպայման պետք է նախապես մշակվեն քաղաքի ընթացքում։

Մշակման մեթոդը։ Բացի սովորողների անմիջական փորձի հաշվառման և ղեկավարի հաղորդումներից, մշակման աշխատանքը պետք է (կիսագրագետների համար) գրանցվի տետրերում։ Գրանցումը պետք է հանդիսանա վորպես ինքնագործունեության հետևանքով ստացված յեզրակացությունների մի շարք։

VII. *Բանվորը սոցիալիստական ձեռնարկության մեջ։* Այս բաժինը պետք է մշակվի քաղաքի հետ միասին, կապված ընդհանուր ծրագրի թեմաներին։

Մշակման մեթոդները։ Ամբողջ մշակած և ուսումնասիրած նյութի հիման վրա ծավալվում է ակտիվ զրույց։ Այնուհետև ղեկավարը ամփոփումներ է անում, վորպիսիք կարող են գրանցվել աշխատանքի տետրերում։

4. Պոլիտեխնիքական մինիմումի ամբողջ նյութը երեքից ներկայացնում է սերտ կապակցած թեմաների մի շարք, վորը կարելի յե բաշխել ու զետեղել նաև հետևյալ կարգով։

ա) Ձեռնարկությունը վորպես սոցիալական որգանիզմ (բաժին I)։

բ) Ձեռնարկության տեղը ավյալ արդյունաբերական ճյուղի մեջ (բաժին VI)։

գ) Հումույթ (բաժին II)։

դ) Մեխանիկա (բաժին III)։

յե) Եներգիայի տարբեր տեսակները (վոր տեսակն է կիրառվում մեր ձեռնարկության մեջ—բաժին IV)։

զ) Արտադրության կազմակերպումը (բաժին V)։

է) Բանվորը սոցիալիստական ձեռնարկության մեջ (բաժին VII)։

5. Ղեկավարի և կազմակերպողի դերը հիմնականում պատկանում է դասատուին, վորը կարող է (և պետք է) մի շարք զրաղմունքների համար ոգտագործել ինժեներա-տեխնիքական պերսոնալը և պրոֆաշխատավորներին (կցած գործարանից կամ այլ ձեռնարկություններից)։

6. «Մեխանիկա» և «Արտադրության կազմակերպում» *թեմաների մշակումից հետո յեղրափակիչ զրույցը պետք է տարվի լայն լոնֆերենցիայի ձևով, ձեռնարկության տեխնիկական պերսոնալի և պրոֆգործիչների մասնակցությամբ։*

7. »Բանվորը սոցիալիստական ձեռնարկության մեջ» *թեման* ցանկալի յե մշակել *ձեռնարկության* պրոֆգործիչների ակտիվ մասնակցությամբ։

Բ. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ։

Արտադրության մեջ աշխատող սովորողների արտադրական պրակտիկայի մասին խոսք անգամ լինել չի կարող—նրանք պրակտիկորեն աշխատում են։ Ինչ վոր վերաբերում է արդյունաբերության մեջ զբավելու համար «ընտրած» կոնտինգենտին, ապա անհրաժեշտ է ապահովել դրանց արտադրական ուսուցումը։ Իսկ անկազմակերպ բնակչությունից կազմված խմբերը անհրաժեշտ է կցել ռայոնի այս կամ ձեռնարկությանը, սկսած ջրաբաշխ-կանալիզացիոն, այլ կոմունալ ու բարեյավման տարբեր աշխատանքներից և վերջացնելով կոոպերատիվական ու կուլտ-կենցաղային ձեռնարկություններով, դանց չառնելով նաև կուլտ-կրթական հիմնարկները։ Ամեն տեղ, ամեն մի քայլափոխում կարելի յե գտնել աշխատանքի կատարյալ նորանոր աշխարհներ, սակայն հարկավոր է կարողանալ այդ աշխատանքները «տեսնել» և, իհարկե, գործը առաջ մղել։

Կուլտշտաբների և իրենց՝ սովորողների մասսաների ակտիվությունը կարող է «պատճառ» դառնալ նաև տեխնիքական կրուժոկների և տեխնիքական անկյունների ծագմանն ու կահավորմանը, վոր փոքր գործ չի տակավին։

III. ԾՐԱԳԻՐ

Կոլխոզային յեվ սովխոզային հասակավորների յիկկայանների ուսումնական հանրակրթական դպրոցներում անցնելիք պոլիտեխնիկական գիտելիքների յեվ ունակությունների

1. Կոլխոզներում, սովխոզներում, ՄՏԿ և Մեքենա-Խոտհար Կայաններում հասակավորների սկզբնական հանրակրթական դպրոցները նուշնպես պետք է առանց ուշացնելու պոլիտեխնիկացման յենթարկել։ Այն բոլորը, ինչ վոր ասած է քա-

գաքի (նրա ֆաբրիկներով, գործարաններով և ամբողջ տնտեսության բոլոր ճյուղերով հանդերձ) մասին, միահավասար չափով վերաբերում է նաև սովխոզներին, կոլխոզներին, ՄՏԿ ՄԹԿ և ամբողջ գյուղական տնտեսությանը՝ նրա արտադրության գործիքներով, արհեստանոցներով, բամբակաբուծությամբ, անասնաբուծությամբ, շերամապահությամբ և այլն։ Մեզնից այդ բանը պահանջում է աշխատանքի ինտենսիվ մեթոդները, մեքենայացումը, նորագույն տեխնիկան, նորանոր գյուտերը և այլն, որոնց շնորհիվ արդեն սկսել, են վերանալ սոցիալիստական քաղաքի և սոցիալիստական գյուղի միջև յեղած սահմաններն ու տարբերությունները։ Այդ բանը մեզնից պահանջում է սոցիալիստական խոշոր տնտեսություն ստեղծող գյուղը, որտեղ համատարած կոլեկտիվացման հիման վրա իրագործվում է կուլակության (կապիտալիզմի այդ վերջի մընացորդի), որպես դասակարգի, լիկվիդացիան։

2. Սոցիալիստական գյուղում աճում է որակյալ ու կուլտուրական աշխատող ուժերի պահանջը։ Մեր գյուղը կարելի յե ավելի արագ ու հսկայական քայլերով առաջ մղել կուլտուրական և տեխնիքական հեղափոխության ճանապարհով, յերբ կոլխոզնիկը պոլիտեխնիքապես զրագետ կդառնա ու հարկավոր չափով կզարգանա։ Մեր խնդիրն է՝ իրագործել այդ վերջինը և գյուղն առաջ մղել կատարյալ սոցիալիստական պրոգրեսի ու կուլտուրայի ճանապարհով, այդպիսով իրագործելով Կոմկուսի և Խորհ. իշխանության առաջադրած խնդիրները։

3. Սովխոզների, ՄՏԿ, ՄԹԿ և այլ պետական գյուղատնտեսական ձեռնարկությունների բանվորական հանրակրթարանների համար միանգամայն կիրառելի յե նաև պոլիտեխնիզմի ծրագրի քաղաքի վարիանտը։ Միայն թե նյութերի բաշխման և մշակման ժամանակ այդ ծրագրի նյութերը պետք է զետեղել և ընտրել համաձայն տեղական պայմանների ու ձեռնարկության բնույթի։

4. Կոլխոզնիկների համար վերոհիշյալ ծրագիրը պետք է վերակառուցվի, մոտավորապես հետևյալ որինակելի ձևով։

I. Կոլխոզը (արտելը)՝ սոցիալիստական գյուղական տրնտեսությունը—սոցիալական որգանիզմ է։ Կոլխոզի և խոշոր կապիտալիստական ֆերմերային տնտեսության տարբերությունները։ Կոլխոզը որպես միասնական տնտեսական ամբողջություն. նրա խնդիրները, պրոդուկցիան, կոլտնտեսության

հիմնական տնտեսական ճյուղերը (անասնաբուծական, բամբակաբուծական, թռչնաբուծական և այլն)։ Այդ ճյուղերի կապն իրար հետ և փոխադարձ կախումը,

II. Մշակույթները (կամ անասունների տեսակները), որ արտադրվում են կոլխոզում։ Պարարտացման նյութերը, սերմնանյութերը, դրանց գործադրման ձևերը։ Ցել ու հերկ պատրաստելու, ցանքսի, քաղհանի, կուլտիվացիայի, բերքահավաքի, կալսելու, զտելու ձևերը։ Սերմերի և ամբողջ բերքի տեսակավորումը։ Պարարտանյութերի ֆիզիքական կազմը։ Աշնանավարի և գարնանավարի ֆիզիքական տարբերությունները, նույնը ցելի, հերկի, սառնավարի մասին։ Վերև նշած այս բոլոր տեսակի մշակումների և պարարտացման հիմնական սկզբունքները։ Ստանալիք բերքը և նրա կախումը մշակման տեսակներից ու վարակից։

III. Մեխանիկա։ Գյուղատնտեսական մեքենաները և մեխանիզմները, որոնք գործածվում են կոլխոզում։ Յուրաքանչյուր աշխատավոր, մեխանիզմի հիմնական հատկությունները։ Աշխատող ուժի ընդունարանը (կոթը, շկիվը, լուծը, լծակը)։ Հաղորդող մասը (առանցքը, ատամնավոր անիվ—ճախարակը)։ Աշխատող մասը (խոփը, կորիչը)։ Պատվանդանը կամ ակները (անիվները), դազգյահը։ Մեխանիզմի աշխատանքի հիմնական տեսակները (կորել, պատռել, փորել, ճնշել, վոլորել, կապել)։ Մեխանիքական հաղորդման տեսակները. ճկուն կապ (գոտիներ, պարաններ, շղթաներ)։ Անմիջական միացում — մուֆթա (կոշտ ու ճկուն), բոլտ, վինտ։ Ատամնավոր հաղորդում՝ ատամնավոր ճախարակներ, արագության տուփ)։ Պտույտավոր շարժման վերածումը առաջախաղացման և ընդհակառակը (ձողավոր ատամնավոր անիվներ, եքսցենտրիկ և այլն)։ Զսփումներ և կոնտրոլ-չափական գործիքներ։

Ծանոթություն։ Տրվում է միայն զանազան մեխանիզմների նկարագիրն առանց հաշվումների։

IV. Եներգիտիկա։ Շարժման աղբյուրները և շարժիչ-մեքենաները։ Կենդանական որգանիզմը։ Մկանային եներգիայի ծագման ու պահպանման ֆիզիքական նախադրյալները։ Մարդը,—նրա ուժի գործադրման կետը (կոթը, լծակը, պարանը, (բլոկում), վոտքի պեդալ)։ Ձիու ուժ։ Ընտանի կենդանիների ուժի կիրառումը (ձիու, յեզան, գոմեշի), որպես եներգիայի աղբյուր գյուղական պրակտիկայում։ „Ձիու ուժը“ շարժիչնե-

ռում բորպես ուժի պայմանական միավոր, որը հավասար է 75 կիլոգրամ-մետրի։ Բնության մեխանիկական ուժերը (քամի, ջուր) և նրանց կիրառումը։ Պրակտիկայում (քամու շարժիչներ—հողամաղաց, հողմելեքտրական և ջրաղաց, ջրելեքտրական. ջրատուրբին։

Ջերմություն։ Գոլորշին—շոգին—որպես շարժիչ (շոգեշարժիչներ, շոգեատուրբին)։ Այրվող հեղանյութերի բռնկվելով այրվելն ու պայթելը և այդ հանգամանքի ոգուտագործելը ներքին այրման շարժիչներում (ավտոների, սավառնակների, տրաքտորների և այլ ներքին այրման մոտորներ)։ Ելեfտրականություն. Ելեքտրական, ելեքտրոմոտոր, կենտ ու գրուպպայական պրիվոդներ (շարժման հաղորդիչներ), ելեքտրական լուսավորություն և նրա ձեռնտու լինելը, հեռախոս, հեռագիր, ռադիո։

Ծանոթություն։ Տրվում է նկարագիրը, ցուցադրելով օբյեկտը, որովհետև ցուցադրումը բռնում է առաջին տեղը։

V. Արտադրության կազմակերպումը։ Զեռքի աշխատանք մեխանիկական.—վերջինիս առավելությունները։ Մասսայական աշխատանք և վորոշ կուլտուրաների միատիպ մշակության անհրաժեշտությունը, որից կախված է մեխանիզացիայի չափական ճշտությունների կիրառումը (շարքային ցանք, կուլտիվացիա, ուր մի մեքենայի աշխատանքը պետք է համապատասխանի մյուսների աշխատանքին)։ Աշխատանքի կապակցումը, նորմայացումը, աշխատավոր ուժի բաշխումը և հաշվառումը՝ մշակման մեխանիզացիայի չափերին ու վորակին համապատասխան։ Աշխատավարձը կամ բերքի բաշխումը համապատասխան աշխատանքին, այլ վոչ ուտողների քանակին։ Աշխատանքի որերի հաշվառումը։ Կոլխոզը պետք է լինի որինակելի—աշխատանքի կազմակերպման տեսակետով։

VI. Ագրարհագրական յեվ այլ պայմաններ, որոնց համապատասխան կազմակերպվել է կոլխոզը (արտելը)։ Կոլխոզի տեղն ու դերը ավյալ գյուղատնտեսական ճյուղում (բամբակաբուծական, անասնաբուծական և այլն)։ Կոլխոզների տեսակների կազմակերպման սկզբունքները (բնական պայմանները, նպատակահարմար լինելը, արտադրողականությունը և այլն), պրոմֆինպլանը (արդֆինպլանը) և նրա ռեալ լինելը—հանդիպական պլան։ Տնտեսության ճյուղերը. նրանց կազմակերպումը և ֆունկցիաների բաշխումը։ Տվյալ կոլխոզի տեղը

ռայոնի կամ յերկրի ընդհանուր ժողովրդական տնտեսության պլանի մեջ, նրա դերը և կապը մյուս կոլխոզների հետ, փոխադարձ ոգնությունը։ Կապը քաղաքի արտադրությունների հետ և փոխհարաբերությունները։ Գյուղատնտեսության և արդյունաբերության հիմնական տեսակները։ Հնգամյակը՝ նրա խնդիրները և կառուցման սկզբունքները։ Տվյալ կոլխոզի 5-ամյա պլանը։ Յերկու աշխարհների պայքարը (սոցիալիստական և կապիտալիստական) և տնտեսավարության սոցիալիստական սիստեմի անխուսափելի հաղթանակը։ Սոցիալիստական շինարարության մեթոդները (սոցմրցում և հարվածայնություն) և նրանց կիրառումը տվյալ կոլխոզում։

VII. Կոլխոզնիկը գյուղում հիմնական տիպն է և սոցիալիստական տնտեսություն կառուցողը։ Կոլխոզնիկը և նրա խնդիրները, պարտականությունները, իրավունքները։ Հասարակական ու քաղաքական կազմակերպությունների և պրոլետարական մասսայի դերը գյուղի սոցիալիստական տնտեսության կառուցման գործում (կուսակցական և կոմյերիտական բջիջներ, թերթերի շրջիկ խմբագրությունն ու պոստերը, պատերթերը և այլն։ Դեպի սոցիալիզմ և կոմմունիզմ տանող ճանապարհը։

Մշակման մեթոդների մասին ասված է քաղաքի վարիանտի համար տրված բացատրական. նամակում։

ՀՍՍՌ-Ադրբ ՍՍՀ
ՀՍՍՌ ԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՍԱՐՅԱՆ ԱՆՎԱՆ

<< Ազգային գրադարան
NL0228611

Azərbaycan Baş mətbəat mudirliqi № 6482. Sifariş № 746. Tiraž 8000. St. f.A.
Azərnəşr mətbəəsində basıldı, Bakı, B.-Morskoj quçəsi № 16/36.

12 ч.

48.892

Библиотека
Института
Востоковедения
Академии Наук
СССР

Az. X. M. K.
Tədris-Metod Sektory.

Bəjuqlərin ibtidai umymi təhsil məqtəbi və savadsızlıq təsvijə mintəkəsi uçun politexniq biliq və vərdişlər

PROGRAMЬ

AZƏRNƏŞR
Baqы—1931